

ԽՈՏՐՋՈՒՐԻ ԲԱՐԲԱՌԸ

Բանասիր. գիտ. դոկտոր Ռ. Հ. ԲԱՂԲԱՄՅԱՆ

Հայերեն բարբառներից ոչ մեկը այնքան մեծ հետաքրքրություն չի շարժել, որքան խոտրջուրի բարբառը: Մասնագետներին այն հետաքրքրել է ամենից առաջ և ամենից շատ բայի սահմանական եղանակի ներկա ժամանակի գրաբարակերպ կազմությամբ, որով մեր բազմաքանակ բարբառների մեջ եզտակի է. գրականության մեջ հայտնի էր որպես Կարնո բարբառի ենթաբարբառներից մեկը, ապա՝ որպես ինքնուրույն բարբառ. վերջերս շրջանառության մեջ մտցվեց Կարնո բարբառի ինդաձորի խոսվածք անվամբ¹:

Բարբառ, ենթաբարբառ և խոսվածք լեզվական տարբեր մակարդակներ են, ուստի առանց լուրջ հիմքերի դրանք վերաորակավորվել չեն կարող. առավել ևս խրախուսելի չեն բարբառների վերանվանումները:

Դեռևս 1911 թ. Հ. Աճառյանը իր «Հայ բարբառագիտություն» հիմնարար աշխատության մեջ գրում էր, որ խոտրջուրի խոսվածքը Կարնո բարբառի մի առանձին ենթաբարբառն է կազմում (դրա համար նա հիմք էր ընդունում $\text{ր} > \text{յ}$ հնչյունափոխությունը, օրինակ՝ փօյրս՝ փորս, խօտույջույցի՝ խոտրջուրցի)², բայց և ավելացնում էր, որ իր ձեռքի տակ եղած նյութը³ «ենթաբարբառի ուսումնասիրության համար նպաստ մը չկրցավ մատուցանել»⁴ և որ այդ ենթաբարբառի «բռնած դիրքը Համշենի և Կարնո բարբառներուն մեջտեղ դեռ բավական պարզված չէ ինձ համար»⁵:

Ուղիղ 40 տարի անց՝ 1951 թ. Հ. Աճառյանը բավական հիմնավոր փաստերով այն վերաորակավորում է Կը ձյուղի ինքնուրույն բարբառ⁶, որ և ընդունվում է բոլորի կողմից:

Խոտրջուրի բարբառը տեղակայված էր Կարին քաղաքի հյուսիսային կողմում գտնվող Կիսկիմի գավառում. ըստ Ա. Դոյի տվյալների 1910 թ. այդ գավառակում կային վեց հայաբնակ գյուղ ու գյուղակներ՝ խոտրջուր ավան՝ 850 տուն, Կարմրակ գյուղ՝ 150 տուն, Կուտրաշեն՝ 40 տ., Փրթիկներ՝ 30 տ., Գասապա՝ 15 տ., Նիխախ՝ 7 տ. (խոտրջուրի մի հատվածն էր խոտրջուրի կոմունան Ախտայի (Ներկայիս Հրազդանի) շրջանում, որը կազմվել էր 1927 թ. և որը մեկ տասնամյակ հետո՝ 1937 թ. ցրվեց): խոտրջուր ավանը բաղկացած էր մի քանի գյուղերից կամ թաղամասերից⁷, օրինակ՝ Վերի ինդաձոր կամ

1 Գ. Բ. Զ ա հ ու կ յ ա ն, Հայ բարբառագիտության ներածություն, 1972, օբյեկտ N 44:

2 «Հմինյան ազգագրական ժողովածու», հատ. Ը, Մոսկվա—Նոր Նախիջևան, 1911, էջ 113:

3 «Երգեր, առակներ, հանելուկներ... խոտրջրո», Տփղիս, 1904:

4 «Հմինյան ազգագրական ժողովածու», հատ. Ը, էջ 113:

5 Նույն տեղում:

6 Հ. Ա ճ ա ո յ ա ն, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 337—338:

7 Նույն տեղում, էջ 337:

Կողոստուն, Կրման և այլն. հենց այս Վերի հնդաձորի խոսվածքով էլ Մ. Հաճյանը գրի է առել մասնագետների կողմից օգտագործվող նմուշները⁸:

«Դժվար է խոսել զուտ գրաբարատիպ ներկայի մասին,— գրում է Գ. Բ. Զահուկյանը,— խոտրջրում այն զուգակցվում է կու-ով ներկայի հետ, կոռում (նաև Ղազար-Շամշադինի, Շամխորի գյուղերում—Ռ. Բ.) գրաբարատիպ անկատարը հանդես է գալիս որպես դերբայական անկատարի զուգահեռ ձև»⁹: Զուտ գրաբարատիպ ներկայի կազմության հարց ոչ ոք չի գնում, ընդհակառակը, բոլոր դիտողներն էլ աներկբա նշում են նաև մասնիկավոր կազմության զուգահեռ գործածությունը¹⁰:

Խոտրջրի բարբառով տպագրված նմուշներ կան «Բյուրակնում» (1899, էջ 642) և «Հուշամատյան խոտրջրի» (Վիեննա, 1964) ժողովածուում, որոնք, ցավոք, գիտական տառադարձությամբ չէ, որ դրի են առնված: Բարբառի միակ ուսումնասիրությունը Մ. Հաճյանինն է, որը տպագրվել է նշված «Հուշամատյանում» և որը գիտական քննություն բռնելու հավակնություն չունի:

Խոտրջրի բարբառում գտնում ենք 43 հնչույթ, որից ձայնավոր են վեցը՝ ա, օ, ու, ը, է, ի, երկբարբառ են երկուսը՝ ե, ո, բաղաձայն 35-ը՝ բ, բ', գ, գ', դ, դ', ձ, ձ', պ, կ, տ, ծ, ճ, փ, ք, թ, ց, չ, վ, զ, ժ, և ֆ, ս, շ, խ, հ, լ, մ, ն, ռ, ռ, յ:

Ձայնավորները ժամանակակից գրական հայերենի հնչմամբ են. երկբարբառները լիարժեք են շեշտված վանկում. ե-ն հնչվում է որպես իէ, իսկ ո-ն՝ օու. բաղաձայններից բ', գ', դ', ձ', զ'¹¹ լինում են բառասկզբում և նույն որակն ունեն, ինչ Կարնո բարբառում. բ, գ, դ, ձ, չ ավելի հաճախական գործածություն ունեն ռնգային բաղաձայններից հետո. ր լինում է բառակազմի անկախ դիրքում:

Ինչպես ձայնավորները, այնպես էլ բաղաձայնները մեծ փոփոխությունների չեն ենթարկվում: Ձայնավորների համար հատկանշական են ամփոփումը՝ սղումը և կամ ը-ի վերածումը, երկբարբառացումը և հայերենին ընդհանուր փոփոխությունը:

Հին հայերեն կամ որպես այդպիսին համարվող բազմավանկ բառերում

8 Ն. Հաճյան, Հին ավանդական հեթաթյներ խոտրջրո, Վիեննա, 1907:

9 Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 105:

10 «Սահմանական ներկային և անկատարին մեջ սովորաբար կը մասնիկն չի գարծածուի, գրաբարին նման կը մնայ. ինչպես. Օձն զետնուն երեսն սողայ. հաբեյն երկնուցէն փղային. Ի՞նչ վրէս ինի ճուաս. Տղաքն պոլոդուտն խաղային. աղբույն պճպճայ»,—գրում է Մ. Հաճյանը «Հուշամատյան խոտրջրի» մեջ, իսկ Հ. Աճառյանն ասում է. «Այս բարբառի գլխավոր հատկությունն այն է, որ աշխարհաբարին հատուկ սահմանական ներկայի կազմության ոչ մի եղանակը չթիտե և պահում է գրաբարի ձևը մինչև այժմ անփոփոխ: Այսպես տանիւ, տանիս ստանում եմ, տանում ես», նստիմ «նստում են», պստկի սպառում է» ևն: Միայն ձայնավորով սկսվող բայերը ստանում են կ մասնիկը (կասիմ, կելեն, կինջնու), միավանկ բայերը ստանում են կու (կուգան, կուտա): Երբեմն էլ բաղաձայնով սկսվող բայերը ստանում են կը կամ կու, որ կարող է նաև հետադաս լինել. ինչ. Լը մնան, կու գայրի, Եղվորի կու» («Հայոց լեզվի պատմություն», 2-րդ մաս, էջ 338): Նույնն է ասում նաև Ա. Ղարիբյանը, միայն ի պատիվ Հ. Աճառյանի ավելացնում է, որ նա առաջինն էր նկատել սահմանական ներկան գրաբարատիպ կազմող խոտրջրի բարբառը և որ այդ բարբառի ուսումնասիրությունը, չնայած իր կարևորության, դեռ չի կատարված («Հայ բարբառագիտություն», 1953, էջ 175, 57):

11 Ըստ Մ. Հաճյանի «բ-ին հնչումը սլ-էն հաստ է, վի-էն կակուղ», իսկ «վի-ն բ-էն կարծր հնչում ունի». այդպես և մյուսները՝ դ-տ-ք և այլն (տե՛ս «Հուշամատյան խոտրջրի», Վիեննա, 1964):

նախաշեշտ վանկի արմատական ձայնավորը սղվում է, երբ կից մոտ եկող բաղաձայնները բաշխելի են նախորդ և հաջորդ վանկերի վրա, օրինակ՝ զա-ւակ > զավակ, սեռ. զավկի, հակառակ պարագայում սղվող ձայնավորը վե-րածվում է ր-ի, ինչպես՝ ժամանել > ժրմնել, կաղանդել > կալոնդել:

Այս վանոնին չեն ենթարկվում կրոնական բնույթի և ուշ շրջանում բար-բառին անցած բառերը. օրինակ՝ խօստովանել > խօստովանիլ, տիրութիւն > տիրութուն, արեւցուցանել > հարեցնուլ, սատանայ > սատանէնիւ «սատանա-ները»: Հատկապես գոյական անունների հոգնակիի կազմությունը զերծ է մնացել հիմքի ձայնավորի սղման կանոնից. օրինակ՝ կաթիլ-կաթիլնի, մագ-ման-մագմաննիւ, ջորի > ջ'օրի-ջ'օրէսուսն:

Երկբարբառայնաւ կարող են միայն ընդհանուր հայերենի ե և ո ձայ-նավորները շեշտված վանկում. օրինակ՝ բեր > բ'եր, մեր > մեր, գորտ > գ'որտ, որոտ > օրոտ, լոր > լոր, կաւոտ > կավոտ, Պողոս-Պօղոս:

Ընդհանուր հայերենի օրենքով ի, ու ձայնավորները այստեղ էլ սղվում են, իսկ է երկբարբառակերպը կորցնում է իր յոտացիոն տարրը և դառնում է ձայնավոր. այսպես. գիւկ-գըրկել, շիլ-շլանալ, գիլ-գլել, ջուր > ջ'ուր-ջ'րի, ալիւր > ալուր-ալրի, տէր-տիրութուն, սէր-սիրել:

Ինչպես ուրիշ բարբառներում, այստեղ էլ միավանկ բառերի սկզբի ո-ն դարձել է վօ, ե-ն՝ յէ, իսկ բազմավանկ բառերի անշեշտ վանկերում դրանք մնացել են անփոփոխ, օրինակ՝ ով > վօվ, ուն > վօտ, ոսկի > օսկի, երկու > էյկու, երկայն > էյկէն:

Գրաբարյան բոլոր երկբարբառներն անխտիր շրջվել են պարզ ձայնա-վորների. այսպես՝ այ > է, ա (լայն > լէն, այրել > էրել, այն > էն, հայր > հար, մայր > մար, այդ > ադ, էդ), ոյ > ու (լոյս > լուս, գոյն > գուն, կա-պոյտ > կապուտ), իւ > ու (արին > արուն, ձին > ձ'ուն, հարիւր > հարուր), ուա > վա (զուարթ > զըվարթ, աստուած > աստված):

Բառասկզբում գտնում ենք շնչեղ ձայնեղ պայթականներ ու պայթաշփա-կաններ. բառակազմի մյուս դիրքերում սրանք հազվագյուտ են. սովորական ձայնեղ տարբերակները հանդիպում են ռնգայիններից հետո (թամբ, թումբ) կամ օտար փոխառություններում (ջալ «վհուկ», բալ «բալ»): Բառակազմի մյուս դիրքերում՝ ձայնավորից, ր-ից հետո և տշն, սրանք հնչվում են որպես շնչեղ խուլ:

Մյուս բոլոր բաղաձայնները մնում են ընդհանուր հայերենի հնչմամբ և անհնչյունափոխ. սրանցից մի քանիսը ինչ-ինչ պատճառներով և առանձին բառերում հնչյունափոխվում են. այսպես՝ խ > հ՝ իաղող > հաղող, հ > յ՝ պահել > բայել:

Այս բարբառը այն եղակիներից է, որը ր-ն դարձնում է յ. փոփոխությունը տեղի է ունենում կախյալ դիրքում՝ բաղաձայնից առաջ և շատ կանոնավոր կերպով. օրինակ՝ դատարկ > դ'այտակ, արտ > այտ, գութ > գ'ոյտ, բաղդի > բ'այդի, քաղաւոր > քափալոր, բայց՝ քափալոյն, ընկեր > ընկեր, բայց՝ ըն-կեյս, հալւր > հաւր, բայց՝ հայս, հօր > հօր, բայց՝ հօյս, ծեր > ծեր-ծէրեր, բայց՝ ծէրեյն, օր մը > օյմ, վաւ նետել > վայ նէտել:

Խոսքերի «Կրման թաղը զարտուղութիւն կը կազմէ, ամուր արտասա-նութիւն ունի և ր-ներն ճիշդ կարտաբերէ»¹²:

¹² «Հուշամատչան Խոսքերի», էջ 389:

Գոյական անունների հոգնակի թիվը կազմվում է եր, նի, ֆ, վի, ստան, ան, ունֆ, ինչպես նաև անֆ, ոնֆ մասնիկներով (վերջին երկուսը ավելի շատ հավաքական կերտող են), եր ստանում են միավանկ բառերը¹³, օրինակ՝ արտ>այտ-այտեր, շոր>շոր-շորեր, ծեր>ծեր-ծերեր, ողն>վող-վողներ, մուկն>մուկ-մուկներ:

Նի (-ներ>նի>նի) ստանում են բազմավանկ բառերը. կաթիլ-կաթիլ-նի, մազման-մազմանին, կալառ-կավառնին, սատանայ-սատանէնին, աղա-աղէնին:

Ք-ն սակավ գործածական է. տղա-տղաք, ձեռն>ձեռ-ձեռք, օրոց-օրոցք, ջաղաց>ջաղաց-ջաղացք, ընկեր-ընկերք. թթի-թթիք, բալի-բալիք, հարամի «հրեշ»-հարամիք:

Ի-ով վերջացող բառերը սովորաբար ստանում են սաան հոգնակիակերտ մասնիկ. գինի>գինի-գինիստան, գօտի>գօտի-գօտիստան, լեղի>լեղի-լեղիստան, մատանի>մատնի-մատնիստան, հոգի>հօքի-հօքիստան, ոսկի>օսկի-օսկիստան, ջորի>ջորի-ջորիստան, տարի-տարիստան, տեղի>տեղի-տեղիստան, քեռի>քեռի-քեռիստան, քենի>քենի-քենիստան:

Մարմնի զույգ անգամների անունների հոգնակին կազմվում է վի մասնիկով. աք-աքվի, աշ-աշվի, ունք-ընքվի, ձեռն>ձեռ-ձեռվի. այս խմբին են անցել նաև դուռն>դուռ-դուրվի, ճանկ-ճանկվի, մատն>մատ-մատվի, միտ (ք)-մրտվի բառերը:

Ան մասնիկ ստանում են մի քանի միավանկ բառեր. գայլ>գիլ-գիլան, էշ-իշան, նէր-նիրան, տէր-տիրան:

Ունֆ ստանում են սակավաթիվ բառեր. աղջիկ-աղջկունք, ափ-ափունք, ծմակ-ծմակունք, տեղ-տեղունք (քաղաք-քաղքունք):

Նկատենք, որ ֆ, ան և նույնիսկ նի մասնիկով կազմված ձևերը կարող են վերաձևավորվել. օրինակ՝ կապիք «ընկուղենիներ», որ բուն հոգնակին է, կարող է ստանալ ստան՝ կակլի-կակլիստան կամ ճամպա-ճամպէնի, բայց և՛ ճամպիստան, նէր-նիրան, բայց և՛ նիրաննի:

Այս ալլաձևությունների համար պատճառ են դառնում համաբանությունը, սակավ բառաքանակ ընդգրկող մասնիկների քերականական նշանակության մթագնումը և այլն:

Հավաքական կերտող մասնիկներն են անֆ (հօրաքոյր>հօրքուր-հօրքուրանք), աֆ (հայր>հար-հարաք), ոնֆ (կէսրոնք), ունֆ (մամունք, պապունք, քէռունք):

Խոտրջուրի բարբառում գտնում ենք ութ հոլովում՝ ի, ու, օ, ան, ա, վա, ոջ, ց. բառերի մեծագույն մասը անցնում է եզակի թվում ի, իսկ հոգնակի թվում ու հոլովման, պինչ-պընչի, դունչ>դունջ-դընջի, քիթ>քինթ-քընթի, զաւակ>զավակ-զավկի, հարս>հայս-հայսի, թերխաշ-թէրխըշի. արտ>այտ-այտեր, այտէրու, աշվի «աշքեր»-աշվնու:

Ա-ով վերջացող բառերի սեռական ձևում -այի հնչյունակապակցությունը ամփոփվում է, դառնում է ի, օրինակ՝ երեխայ>էրէխա-էրէխի, փեսայ>փէ-

13 Հ. Աճառյանը նշում է ի (եր>ի>ի) հոգնակիակերտ մասնիկ և բերում է օրինակներ. ածի՝ այծեր, լվի՝ լվեր, ջրին՝ ջրերն, ծովին՝ ծովերն («Հայոց լեզվի պատմություն», 2-րդ մաս, էջ 337). նոր սերնդի խոսվածքում և գրավոր աղբյուրներում ավելի սովորական է եր մասնիկը:

սա-փէսի, տղայ>տղա-տղի, սատանայ>սատանա-սատանի, աղա>աղի, փաշա>փաշի, մալա «աղանդեր»-մաղի:

Եզակի թվում ու հոլովման են անցնում ի-ով վերջացող բառերը. այս-պես՝ բարդի>բ'այտի-բ'այտու, դինի>գ'ինի-գ'ինու, գիւղացի>գ'էղացի-գ'էղացու, թթի-թրթու, մորթի>մօյթի-մօյթու (հատուկ անունների մեծագույն մասը) Բասեն-Բասէնու, էրզրում-էրզրումու, Թիֆլիս-Թիֆլիսու, Խնդաձոր-Խընդաձորու, Հայաստան-Հայաստանու, Մուշ-Մըշու, Գիսակ-Գիսակու: Բացառաբար այստեղ են անցնում նաև՝ մանշ-մանշու, մարդ>մայթ-մայթու, գլուխ>գ'ըլուխ-գ'ըլխու և այլն:

Ո հոլովման ենթարկվում են հատուկենտ բառեր. հայր>հար-հօր, մայր<մար-մօր և այլն:

Ա հոլովման մնում են որոշ թվով հատուկ անուններ, օրինակ՝ Սարգիս-Սարքսա, տերունական անուններից՝ Աստուածածին-Աստվածածնա, Լուսաւորիշ-Լուսաւօրշա, և հասարակ անուններից աղօիկ-աղշկա:

Ան հոլովման են անցնում սակավաթիվ բառեր. ուլ-ուլան, եզ-յէզան, մատ-մատան, ալ-ական, սար-սարան, ծակ-ծական, ճակատ-ճակտան, դադաթ-գ'ագթան:

Վա հոլովման համար ունենք՝ տարի-տարվա, հերու-հէրվա, էգուց-էգվան Ոջ հոլովման մնում են՝ աներ-անէրոջ, ընկեր-ընկէրոջ, կեսուր-կէսրոջ, կին-կնոջ, տաղր-տագրոջ, տալ-տալոջ, տէր-տիրոջ, քոյր>քուր-քրոջ բառերը:

Յ հոլովման են պատկանում արմատական ֆ բաղաձայնով վերջացող կամ հոգնակին ֆ-ով (իֆ, ուֆ, ունֆ, աֆ) կազմող բառերը. այսպես՝ հարսանիք>հայսնիք-հայսնէց, ընտանիք-ընտանէց, քէռունք «քէռոնք»-քէռունց, մամունք-մամունց, պապունք-պապունց, հօրքուրանք-հօրքուրանց, կեսրանք-կէսրանց, ծմակունք-ծմականց, ափունք-ափանց, հարաք-հարաց, տեղունք-տէղունաց, տղաք-տղաց, ոտք-վօտաց, ջաղացք-ջաղցաց, աղշկունք-աղշկանց, խնամիք-խնամէց, օրոցք-օրցաց. այդպես և՛ պաս-պասուց, ուտուս-ուտսուց:

«Հոլովման մեջ հայցականը դրվում է տրականի ձևով, որով բարբառս միանում է մի կողմից Կարնո և մյուս կողմից ում ճյուղի բարբառների հետ»¹⁴: Ավելացնենք, որ սեռականը հոգ է ստանում, որով սեռական-տրական-հայցական հոլովները ձևով նույնանում են: Բացառականը կազմվում է է (էն, մէն). իսկ գործիականը՝ ով (մով) վերջավորությամբ, ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է տրականով և մեջ կապով, սակայն հաճախ հանդիպում է այդ ետադրության հոմանիշ նի-ով կազմությունը¹⁵, որ ուրիշ բան չէ, եթե ներս>ներս>նէս բառի սուղ ձևը՝ նիս>նի (հմմտ. դուրս>դ'ուս), օրինակ՝ երես «թուշ»>էրես-էրեսնինի «թշերին»:

¹⁴ Հ. Ա ճ ա ո յ ա ն, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, էջ 338:

¹⁵ «Նոտորջութի ենթաբարբառում ներգոյականի վերջավորությունն է նի. ինչ. տուննինի «իտան, ի տուն» (Հ. Ա ճ ա ո յ ա ն, Լիակատար բերականություն..., հատ. 3, էջ 689), որը, սակայն, սակավադեպ գործածություն ունի: Այս նի, ինի մասնիկը անորոշ դերբայի հետ նշանակում է ժամանակ, պահին. օրինակ՝ «Թագաւորին մէ շամաւամ (ապտակ) վայնու էրէսնինի ու կասա». «Ճամպէն դալնինի օձն գլուխն նէ բաշնց վօրմնինի» («Հուշամատյան Նոտորջութի»): Փրկույթը նույնն է. ինչ Շամխորի շրջանի խոսվածքներում (հմմտ. պատնինի «պատի վրայով», նամիկնոնի «ճանապարհով՝ ճանապարհի ուղղությամբ»):

Ահա հոլովման ամենաընդհանուր պատկերը.

Ուղղական	Սեռական	Տրական	Հայցական	Բացառական	Դործիական
զավակ	զավկի	զավկին,	ն.	զավկէ	դավկով
մանչ	մանչու	մանչուն	ն.	մանչում)է	մանչով
տուն	սնուն	ն.	տուն	տնէն	տնով
սար	սարան	ն.	սար	ւար(ան)է	սարով
աշվի	աշվրնու	աշվրնուն	աշվի	աշվրնուցէ	աշվրնով
տղաք	տղաց	ն.	ն.	տղացմէ	տղացմով
խնամիք	խնամէց	ն.	ն.	խնամէցմէ	խնամէցով
բալիք	բալէց	ն.	բալիք	բալուցէն	բալուցով
աղջկունք	աղջկանց	ն.	ն.	աղջկանցմէ	աղջկանցմով

Անորոշ հոգն է մէ, մ, որ կարող է կրկնվել. «Կեյթա զայնու մէ աղջկանըմ.— Ծօ՛, գիտեմ թէ շարշուն մէ բանմ ունեանք. Մտնու մէ պառվում տուն»:

Մյուս հոգերի կիրառությունը սովորական է. «Բսա վերի ճամբովս էյթաք ընա», ընկեյս, ճիտս, հայս «հայրս». «Մեր ծերեյն պատմին թէ. Զիուն ագիքն կապին». մայն «մայրը», մօյն «մորը», կնոջն, տղէն, շվանն, հալավնին, աղէնուն «աղաներին»:

Դերանվանական ձևերի մեջ առանձին նորություններ չկան.

-յէ(ս), ինձ(ի). մենք, մեր. դու, քու, քէզի. դուք, ձեր. ինք(ն), իրէն. իրենք, իրէնց.

-ադ (իդա, իտա), ագոր (իդոր, իտոր), ադօրմէ (իդօրմէ), ադօրմով (իդօրմով). աս (սա, իսա), իսոր. էն (ինա), էնոր (ինոր), ադոնք (իդոնք, իտոնք), ագոնց (իդոնց), ադօնցմէ (իդօնցմէ), ադօնցմով (իդօնցմով). իսոնք, ինոնք.

-մէրոնք, մէրոնց, մէրօցմէ, մէրօցմով. իրէնցնին, իրէնցնուն, իրէնցնումէն, իրէնցնումով. իմօքս, իմոցս, իմօցմէս, իմօցմովս.

-իսման «այսպես», իտման (ատման) «այդպես», իման (էման) «այնպես», իսգուս «այս կողմ», իդգուս «այդ կողմ», ինդուս «այն կողմ», իսանք «այս կողմերը», իտանք «այդ կողմերը», ինանք «այն կողմերը». հօղա «այստեղ», հօտա «այդտեղ», հուն(ա) «այնտեղ», հող «այստեղ», հոն «այնտեղ». ինց(ց)օ «ինչպես», օրման «որպես, ինչպես», ինչօրա «այստեղից-այնտեղից», ալար «բոլոր», վօվ «ով»:

Ուշագրավ են օս, նաս, նէն բառ-մասնիկները, որոնք նախադաս կապերի դեր են կատարում և բայերի հետ նշանակում են դեպի. օրինակ՝ օս տուր|| նաս տուր||նէն տուր. օս տվէ||նաս էկեֆ, նէն գ'նա:

Խոտրջուրի բարբառն ունի չորս դերբայ՝ անորոշ, հարակատար, ժխտական, ենթակայական: Անորոշ դերբայը կազմվում է ալ, իլ, ուլ վերջավորություններով. ալ՝ խաղալ, ավտալ «հավատալ», կէնալ, զարմանալ, էյթալ «երթալ», ունէնալ. իլ՝ աշիլ «նայել», նեղվօրիլ «նեղանալ», պատմիլ, սօրվիլ «սովորել», նրստիլ, տանիլ, հասնիլ, ապրիլ, ծախիլ, ծլիլ, ծաղկիլ, խօսիլ, կըպչիլ, փախչիլ, թաքչիլ, անցնիլ. ուլ՝ գըտնուլ «գտնել», հէծնուլ «հեծնել», մըտնուլ «մտնել», առնուլ, կալնուլ, դայնուլ «զարկել», լըլնուլ «լցնել», ինջնուլ «իջնել», թօղուլ «թողնել» թաքցնուլ, խօսէցնուլ, կըրթացնուլ «կշտացնել»:

Հանդիպում են նաև ել լծորդության ձևեր, սօրվել «սովորել», հարել և այլն:

Հարակատար դերբայը կազմվում է և՛ վերջավորությամբ. կականած «կանգնած», պառկած, խաղցած, կարթցած, իսկ ենթակայական դերբայը՝ ող վերջավորությամբ. ծլող, աշող «նայող», խաղցող, կէնող, հաքցընող, կօյ-սընցնող: Ժխտական դերբայը՝ կազմվում է անորոշի չ վերջավորության ջնջմամբ՝ ա խոնարհման բայերի համար, օրինակ՝ ման գալ-ման գա վօջ, իսկ ի, ու, ե խոնարհման բայերի դեպքում այդ փոփոխությունը սովորաբար տեղի չի ունենում, պայմանական եղանակի ժխտական ձևերն ու արգելական հրամայականը կազմվում են անորոշ դերբայով. մի՛ ձվա, մի՛ տա, բայց՝ մի՛ պատռել, հասնիլ չէք: Ասենք, որ ապառնի դերբայական ձևերը զուտ դերբայական չեն, այլ անորոշի սեռական (ծախելու, անցնելու, յէլնելու, գալու):

Ձևաբանական մակարդակում այստեղ գտնում ենք երեք եղանակ՝ հրամայական, սահմանական և հարկադրական. սահմանական ներկայի և անցյալի անկատարի ձևերը կիրառվում են նաև որպես պայմանական և ըղձական:

Հրամայական եղանակի եզակի թվում ձևակազմիչ է դառնում շեշտակիր ա-ն՝ վայթա՝, խմա՝, սօրվա՝, կըտրա՝, պատմա՝, ծախա՝. անկանոն և սոսկածանցավոր բայերի դեպքում բայահիմքն առնվում է որպես հրամայական՝ առ, կե՛, է՛կ (է), տե՛ս, նի՛ստ, յէ՛լ (բ՛ե (ր), տա՛ր). պատճառական ածանցը ստանում է ցու(ր) տեսքը, օրինակ՝ հանգցուր «հանգցրու», անցո՛ւ «անցկացրու», հարադիր բայերը մնում են գրական հայերենի ձևով՝ վե՛ր կալ, մա՛ն էկ:

Հոգնակին կազմվում է եզակիի, որպես հիմքի վրա դիմային էֆ վերջավորության ավելացմամբ. այսպես՝ խա՛ղց-խաղացէ՛ք, է՛կ-էկէ՛ք, տո՛ւ-տվէ՛ք, կամ էլ կազմվում է անցյալ կատարյալի հիմքից՝ կականէցէ՛ք «կանգնեցեք»: Պատճառական ածանցավոր բայերի դեպքում պահվում է հին ցուց ձևը՝ հանգցուցէ՛ք «հանգցրեք»:

Արգելական հրամայականը կազմվում է մի՛ եղանակավորող բառ-մասնիկով՝ եղակիի համար և մի՛ք՝ հոգնակիի համար, որոնք կարող են բայից թե՛ առաջ և թե՛ ետադաս լինել. ա խոնարհման բայերի դեպքում առնվում է ժխտման դերբայը, օրինակ՝ մի՛ տա, մի՛ կայթա, իսկ մյուս խոնարհիչների դեպքում՝ անորոշը՝ մի՛ պատռել, մի՛ հաքնիլ, բայց և՛ մի՛ հանեյ «մի հանիր», մի՛ գըտնուք, «Համա ձամբէնին ջ ուր խմել միք»: Սահմանական եղանակն ունի հինգ ժամանակ՝ ներկա, անկատար, հարակատար, անցյալ հարակատար, անցյալ կատարյալ: Ներկան և անկատարը գործածվում են նաև որպես ապառնի և անցյալ ապառնի, հարակատարը գործ է ածվում նաև որպես վաղակատար, սակայն բուն վաղակատարը կազմվում է հարակատար դերբայով և ունենալ բայի դիմավոր ձևերով:

Սահմանական ներկան և անկատարը, ինչպես ասվեց վերը, կազմվում են գրաբարակերպ. «Տղէն զազն տանի պազայն ծախելու—Տղան սագը տանում է շուկա ծախելու». «Հէմէն սըխիրին մէշէն դուս թըռչի, բըռնու ու չի թողու, վօր գօյտի զլավաթ մըտնու—Նույն խսիրի միջից դուրս է թռչում, բռնում ու չի թողնում, որ գորտի կերպարանք ստանա». «Մեր ծէրէյն պատմին թէ—Մեր ծերերը պատմում էին թե»:

Կազմության այս եղանակը, սակայն, բացարձակ չէ.

1. Միավանկ բայերի ներկան և անցյալ անկատարը կազմվում են նախադաս կու մասնիկով. «Կու գա տուն, մանչուն տէսնու, հայսին ալ տէս»:

նու—Գալիս է տուն, երեսային տեսնում, հարսին էլ տեսնում»։ «Խաղա, խաղա ու կու գա մէ շամալամ զայնու էրէսնինի—Խաղում է, խաղում ու գալիս մի ապտակ զարկում երեսին»։

2. Զայնավորով սկսվող բայերի ներկան ու անկատարը կազմվում են նախագաս կ մասնիկով. «Գ՛րիս կէնա, ուղտն շօքի, բ՛եռն նէ քաշա, ուղտին ալ սաղ-սաղ համլէմ քաշա տանի ձ՛րգա մառանն—Դ՛րիս է անում, ուղտը շոքում է, բեռը ներս է քաշում, ուղտին գավազանով խփում է, տանում ձգում է մառանը»։ «Գիշեյն տղէն ալի յաթթան կառնու տանի թաքավօրին դուռն զայնու—Գիշերը տղան դարձյալ հուռութքը (գրած թուղթը) վերցնում է տանում թագավորի դուռը ծեծում»։ «—Հիմի ի՞նչ դատիս,—կասա—Հիմա ի՞նչ ես մտածում,—ասում է»։ «Թաքավոյն աս վօր լսե, կայմնա ու զայմնա—Թագավորն այս որ լսում է, արմանում ու վարմանում է»։ «Մէ թաքավոյմ կընի, իրէք մանչ զավակ կունէնա—Մի թագավոր է լինում, երեք տղա զավակ է ունենում»։

3. Երբեմն բաղաձայնով սկսվող բայերն էլ են ստանում նու, նո մասնիկ. «էրազմ կը տէսնու—Երազ է տեսնում», կը սօրվեմ, կը խաղամ, կու զայնու, կու ձաթկեն «զարդարում են»։

4. Կու եղանակիչը սակավ դեպքերում գրվում է նաև ետադաս. կու նէղվօրի, բայց և՛ «Աս վօր կիմանա թաքավոյն շատ նէղվօրի կու, չգիտա ինչ էնա—Այս որ իմանում է թագավորը, շատ է նեղանում, չի իմանում ինչ անի»։ «—էն հավքն քէզի լուս աշխարք հանա կու—Այս հավքը քեզ լույս աշխարհ կհանի»։

5. Ինչպես նկատում է Մ. Հաճյանը, խոսքը ազդու դարձնելու համար եղանակիչը փրկնվում է. «Լավ կը կէնիմ, չիմ էյթա»։ «Լավ կը կէնիմ կը, չիմ էյթա»։ «Դու նո՛ւր էկար—Դու ինչո՛ւ (ո՛ւր) եկար»։ «Կու գայի կու»։

6. Վերը նշված ձևերը հաճախ հանդես են գալիս կողք-կողքի. «Կու գան կէլնին կախարանին մոտ»։ «Մտնու մէ պառվում տուն, կասա»։ «Տղին խապայն անկաճ կէնին, ինչորա պատըռտուն շորեյ հաքնին, իրենց հալավնին հուն դուքյանն վայ դնին, կէյթան ման գալու»։ «Կընիկն գիտա թէ շիտակ ա, ուն կու տա, սինուն մէչ գնա, քըրման շալն ալ վրէն ձ՛գա»։ «Տղէն զազն կառնու, կէյթա իրէն տուն, մօյն հէտ վայ նըստին, անուշ կուտին»։ «Կու ման գան մեկ դար մը վայ նըստին, պաշար կուտին, հանգչին»։ «Միշնէկ մանչն ալ նետա, կէյթա զայնու մէ աղջկանըմ, էնոր կասա»։ «Հասնին էն տեղ, նե մըտնուն մազարէն, կաշին»։

7. Վերջապես, մեր գրի առած նմուշում (տե՛ս ստորև) ներկայի կազմության երկու ձև էլ կա, որոնք եթե արտառոց չեն, հազվագյուտ են ընդհանրապես. ահա այդ ձևերը.—չես հավատասե, չես ամշընասէ, ինչի՞ չես գասե.—բէրէե, կըսէե, կանչէե, նըկատէե, շալկէե, պատմէե, գըքաէե || գըքայիէ. կէյթաե, հանգըստանաե, կընգնիե, տէսնիե, կանցնիե, հասնիե, նըստիե, կիշնիե։

Սրանց մեջ առաջին խմբի օրինակները վերաբերում են Եղիակի թվի երկրորդ դեմքին և գործածված են միայն ժխտական խոնարհման դեպքում, իսկ երկրորդ խմբի օրինակները հաստատական խոնարհման ձևեր են, բայց դարձյալ Եղիակի թվի երկրորդ դեմքի համար են. շնայած տարբեր են լծորդությունները, բայց դարձյալ ընդհանուր է դիմային վերջավորության երկբարբառայնացումը։

Բարբառիս շորս լծորդության ամփոփ պատկերը՝ սահմանական ներկայի ու անկատարի համար, հետևյալն է.

— կուտիմ, կուտիս, կուտա, կուտինք, կուտիք, կուտին

սօրվեմ, սօրվես, սօրվէ, սօրվենք, սօրվէք, սօրվեն

կայթամ, կայթաս, կայթա, կայթանք, կայթաք, կայթան

տէսնում, տէսնուս, տէսնու, տէսնունք, տէսնուք, տէսնուն

— կուտէի, կուտէիր, կուտէր, կուտէանք, կուտէիք, կուտէին

սօրվէի, սօրվէիր, սօրվէր, սօրվէանք, սօրվէիք, սօրվէին

կայթայի, կայթայիր, կայթար, կայթայանք, կայթայիք, կայթային

(կը) տէսնէի, (կը) տէսնէիր, (կը) տէսնէր, (կը) տէսնէանք, (կը) տէսնէիք, (կը) տէսնէին:

Հարակատար ժամանակը կազմվում է հարակատար դերբայով և օժանդակ բայի ձևերով.

«Կովն կօբած էր». «Տղէն քուն էղած ա», ծարաված իմ, կակնած ին: Ներգործական բայերի անցյալի հարակատար ժամանակի ձևերը կազմվում են ոչ թե օժանդակ բայով, այլ ունիմ բայի ձևերով. կէրած ունիմ, ունիս, ունի, ունինք, ունիք, ունին. կէրած ունէի, ունէիր, ունէր, ունէանք, ունէիք, ունէին:

Սրանք հավասարապես գործ են ածվում նաև որպես վաղակատար և անցյալ վաղակատար. «Մայս տղա բէրած ունի. Մենք լսած ունէանք. Վրէն գրած ունիր իսման. Վօվ զայկած ունի. Ի՞նչ էրած ունիս. Կախ էրած ունիմ. Թաքավոյն ալի էրազ տէսած ունի»: Քերականական ոճեր են. «Կէրած ունէնամ. Կէրած ունէնայի. Կէրած պիտի ունէնամ. Կէրած պիտի ունէնայի. Մենք լսած ունէանք պիտի»:

Անցյալ կատարյալը սովորական կազմություն ունի.

— ասէցի, ասէցիր, ասաց, ասէցանք, ասէցիք, ասէցին

տարի, տարիր, տարավ, տարինք, տարիք, տարին

էկա, էկար, էկավ, էկանք, էկաք, էկան

վեր կալի, վեր կալիր, վեր կալավ, վեր կալինք, վեր կալիք, վեր կալին

— մնացի, կօրա, փախա, թըռա, տըվավ, զայթէցավ, հանգչէցանք, գընացին, բէրին, կանչին, սօրվէցուց:

Ավելորդ է ասել, որ ըղձական եղանակը կազմվում է սովորական ձևով. հարել-հարեմ, հարես, հարա, հարէի, հարէիր, հարէր, վեր կալնուլ-վեր կալնում, վեր կալնուս, վեր կալնու, վեր կալնէի, վեր կալնէիր, «Վօր էրթաս տնէտուն, ուղտի միս ուզա, գըտնուն ու բէրին. Տվէք տանիմ ծախիմ»:

Հարկադրական եղանակը կազմվում է պիտի եղանակիչով. պիտի ըլնի, պիտի անցնին, պիտի ապրինք (պէտք ա դապուլ էնես): Հարկադրականի այս ձևերը հավասարապես գործ են ածվում որպես սահմանական ապառնի¹⁶:

«Այս գավառաբարբառիս մէջ հարցական ամեն նախադասութեանց վերջ թէ շաղկապն կաւելցուի, ինչպէս. կերթա՞ս թէ. հա՞ց կուտիս թէ. գալ չի՞ն թէ»¹⁷. «Ըմպա դու ինծի իտման շասի՞ր թէ. Իսա ճնճղո՞ւզ ա թէ. Չէ՞ք աւտալ թէ»: Սրանով այս բարբառը համընթաց է Համշենի բարբառին, միայն վերջինում թէ-ն դարձել է տա:

Սովորական թեական նախադասությունները ձևավորվում են ինա եղա-

¹⁶ Հմմտ. Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, էջ 338:

¹⁷ «Հին ավանդական հեքիաթներ Խոսրոս», Վիեննա, 1907, էջ 6—7:

նազանգի թաղամասից, օրինակ՝ «Ներքին ճամբով երթաք ինա՝ իրէք ամսով հասնիլ չէք, իսա վերի ճամբովս երթաք ինա՝ իրեք ավուր մէջ բովիք (հասնել) քաղաքն»:

Պայմանական եղանակի ժխտական ձևերը կազմվում են ժողովրդա-խոսակցական հայերենի սովորական եղանակով. կէնալ չիս, խօսիլ չի, դիպչիլ չիմ, առնուլ չիմ, կըրթացնուլ չի «չի կշտացնի», ոչինչ գտնուլ չին, չի դիպչի. թէ վօր ինձի չէք ավտալ:

Ստորև ներկայացնում ենք խոտրջուրի բարբառի մի նմուշ

Կէղնի չէղնի մէ մայթ ու կընիկ, համա էսոնք իրար չեն հավնի՝ մայթը կընկան կըսե խէլառ, կընիկը՝ մայթուն. մէ օր ալ մայթը մէ քանի փութ յէղ ու բըրինձ բէրէե տուն ու կընկան կըսէ՝ բայե:

— Եր կըսեմ է խէլառ էս, չես հավատասե, էսքանը մէ անկամէ ինչի՞ համար էս առե,— կըսէ կընիկը:

— Ի՞նչ կըսես է, այ կընիկ, բարիկէնթանի համար է, տար բայե:

Կընիկը հանգըստանաւ ու տանիւ բայէ. կընիկը շատ սպասէ, բարիկէնթանը չի գաւ, համա մէ օր տէսիւ իրանց տան առաչէն մէ անժանօթ կանցնիւ, էսիկ կանչէ.— Ախպէր, կայնի, դու բարիկէնթա՞նն էս:

Անցօյթը նըկատիւ, օր էստրա խէլքը պակաս է, կըսէ.— Հա, քուր ջան, յէս էմ:

— Մենք խօ քու ծառան չենք, օր քու յէղն ու բըրինձը բայենք, չես ամչընասե, ինչի՞ չես դասե ապրանքըտ տանիս:

— Ի՞նչ մի նէղանա, քուր ջան, ձեր տունը ման գըքաիւ, չէի գըթնի:

էսիկ յէղն ու բըրինձը շալկէ ու կէյթաւ դեպի իրենց դէղը: Մայթը գըքաւ ու կնիկը պատմէ էղածը.— Վայ քու անխելք տունը քազվի, վօ՞ր կողմ գընաց:

էսիկ ձի նըստիւ, կընգնիւ բարիկէնթանի հէտէվ. գըքա հասնիւ էնդրան.

— Բարի օր, ախպէրացու.— Աստըծու բարին:— էս ճամփով մայթ շանցա՞վ, յէղն ու բըրինձը շալկին:— էյկար ծառանակ առաչ անցավ:— Օր ձիւն քըշեմ, կըհասնի՞մ էնոր:— Չես հասնի, դու ձիյով, ինքը վօտքով. մինչէվ քու ձիւն շոյս վօտքը փօխի, ինքը էյկու վօտքով կէյթա, կանցնի. գուղես յէս ձիւտ բայեմ, դու էնդրա պէս վօտքով վազէ, կարօղ է հասնիս:

էսիկ ձիուց կիշնիւ, ձիւն թօղնիւ էնդրա մօտ, վօտքով կէյթաւ, համա չի հասնի, հէտ գըքաւ, տէսնիւ ձիւն չըկա. գըքաւ տուն, ըսկըսեն կըռվէլը՝ մայթը յէղ ու բըրինձի համար, կընիկը՝ ձիւն համար¹⁸:

18 Փոխադրեց ժենյա Թորոսյանը (բաղ. Բաթում, Երևանի պետհամալսարանի ուսանողուհի):

ХОТРДЖУРСКИЙ ДИАЛЕКТ

Р. А. БАГРАМЯН

(Резюме)

Хотрджурский диалект — распространенный в селе Хотрджур в б. Кискимском уезде близ г. Карин — вместе с диалектом Арамо составляет самостоятельную ветвь армянских диалектов, характеризующуюся древнеармянским типом образования изъявительного наклонения глагола в настоящем времени. Диалект, представляющий большой интерес, в настоящее время исчез почти полностью, однако монографически пока не исследован.

В статье выявлены основные особенности хотрджурского диалекта — наличие звонких придыхательных согласных в начале слова, переход сонорного г (ր) в j (յ) перед согласными, дифтонгизация гласных е(ե) и о(ո), образование местного падежа при помощи частицы ինի, морфологическое тождество родительного, дательного и винительного падежей, а также тождество форм будущего времени желательного наклонения с настоящим изъявительного наклонения, употребление временных форм принудительного наклонения вместо будущего изъявительного наклонения, наличие спрягателя u(ու) у глаголов с аффиксами, отсутствие причастных форм (դեմքի) несовершенного, будущего и прошедшего времен, образование условно-неопределенных предложений посредством թի, ինի на конце.